

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով, որ Միսիանի համայնքի վարչական տարածքում առկա են պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողեր որոնց վրա առկա են ինքնակամ կառույցներ, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականավման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն և «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումների տվյալ կառույցների նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո ինքնակամ կառույցը և առանձնացված հողամասը սահմանված կարգով և զներով կօտարվեն ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով կամ վարձակալության իրավունքով օգտագործման կտրամադրվեն ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Նշված գործառույթը կնպաստի համայնքային բյուջեի եկամտային մասի ավելացմանը, որոնք կնպաստակառուղվեն քաղաքի հետագա ծրագրերի իրականացմանը:

Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝



Ս.Հովհաննիսյան

26.07.2018թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Միսիանի քաղաքային համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և
տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝



Ս.Հովհաննիսյան

26.07.2018թ.